

«ՊԱՌԱՎ» ԲԱՌԻ ՀՈՄԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Բանահյուսությունում գործող անձի անունը կամ անվանումը նրա գործառնությունների ծածկագրումն է և, եթե հնարավոր է լինում այն իմաստավորել, ապա լրացուցից տվյալներ են ի հայտ գալիս:

Հայկական հեքիաթներում պառավը հազվադեպ է անձնանուն ունենում, ինչը բնորոշ է հնդեվրոպական բանահյուսության ավանդույթներին: Անձնանվան բացակայությունը, հավանական է, կերպարի ընդհանրեցման արդյունք է, սակայն հեքիաթներում հաճախ են օգտագործվում անվանման հոմանիշ ձևեր:

«Պառավ» բառի հաճախ կրկնվող հոմանիշներից են «նանի» (որպես տարբերակներ «նան», «նանե»), «դեդի», «մայր» (մեր, մերա), «ադե» և այլ «մայր» նշանակություն ունեցող բառերը: Իր հաճախականությամբ «նանե»-ն «պառավ»-ից հետո ամենատարածված անվանման ձևն է: Այն հանդիպում է Հայաստանի բոլոր շրջաններում գրառված տեքստերում, անկախ կերպարի դերից, դիրքից, բնութագրից, պառավ-հերոս հարաբերություններից, դիմողի վերաբերմունքից: Այս երկու բառերը կարող են օգտագործվել զուգահեռաբար: Օրինակ՝ «...դռան առաջը մի պառավ կնիկ մի մեծ թեչի ձեռքին օլորըմ ա: - Բարի օր,-ասեց,- նանի» (ՀԺՀ, Ղավթի հեքիաթը, հ.1, 1959, էջ 306):

«Նանե» բառը հայերենում կարող է նաև անձնանուն լինել, իսկ հեթանոսական շրջանում Նանեն հայկական դիցարանի գերագույն աստծո՝ Արամազդի երրորդ դուստրն էր, Անահիտի և Աստղիկի քույրը: Ժամանակակից հայերենում «նանե» բառը օգտագործվում է թե՛ որպես անձնանուն, թե՛ որպես ընտանիքի մեծ, հարգելի, պատկառելի տիկնոջը, տատիկին դիմելու ձև: Գր.Ղափանցյանը, ուսումնասիրելով Նանե դիցանունը, գտնում է, որ այն հայկական դիցարան է ներթափանցել սուրբարախուժիական և խեթական դիցաբանների միջոցով: Աքքադական դիցարանում նա Շաուշկա և Հեպիտ աստվածուհիների ծառան էր և կրում էր ՆԱՆԻՏԱ անունը (Գր. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան, 1967, էջ 291):

Գ.Ջահուկյանը գտնում է, որ «Նանե դիցուհու անվան» ման բառից ծագելը քիչ հավանական է, ավելի հավանական է, սրա փոխառյալ լինելը (հմմտ. ակկադ. Nanaia)», ավելացնելով, որ հայկական «բարբառներում կան այս անձնանունից ստեղծված բառեր ման, մանա, մանե, մանի ձևերով»։ (Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, 1987, էջ 56)։

Հնարավոր է, որ ոչ թե գոյականն է առաջացել անձնանունից, այլ հակառակը, ինչն առասպելական հիմնական օրենքներից մեկն է։ Գիտնականը նաև գրում է. «Նան, մանի, մանե, մանա բառերի համար հնարավոր է ենթադրել նաև իրանական ծագում (հմմտ. ց. պրսկ. *ناهنا* «մայր»), եթե չենթադրենք բնիկ և իրանական փոխառյալ ձևերի խառնուրդ (բաղարկություն)»։ Նա նաև նշում է, որ այս բառը պահպանվել է նաև կովկասյան մի շարք ժողովուրդների արագների, ինգուշների, չեչենների, լաքերի և այլոց լեզուներում, ճիշտ է, հնչյունաբանական փոքր-ինչ տարբեր ձևերով և նույն նշանակությունն ունի՝ մայր, տատիկ. «ման (-ա, -ե, -ի). «մայր» (հ. -ե. *нама, нена* և այլն -*аръа. нах* «մայրիկ», արազա. *мына*, ադրդ. *мэнажъ* «տատ», կար. *Нама* «տատ, տատիկ, պառավ կին» բառերը (Ամր., էջ 182, 412, 603)։

Այսպիսով, բոլոր թվարկված լեզուներում էլ «մանե» նշանակում է «մայր», «ծեր կին», «տատիկ», այսինքն ունի այն բոլոր իմաստներն, որոնք առկա են հայկական հեքիաթներում որպես «պառավ» բառի հոմանիշներ։

Գուգարքում գրառված հեքիաթներում «պառավ» բառի հոմանիշնարից է «դեղի»-ն։ Բառի տարածվածությունը պայմանավորված է Վրաստանի հարևանությամբ և այն հանգամանքով, որ հեքիաթների մի մասը գրի է առնվել Վրաստանի հայաբնակ Սարմեուլի և Բուլնիսի շրջաններում։

Ինչպես և նախորդ դեպքերում, «դեղի» բառի օգտագործումը պայմանավորված չէ կերպարի հատկանիշներով, «պառավ-հերոս» հարաբերություններով՝ միևնույն տեքստում կերպարը կարող է անվանվել «պառավ», «դեղի», «մանե»։ Օրինակ. «Սաչլու խանում կամ Սառսանում» հեքիաթի հերոսուհին ասում է պառավին «- Նանի՛, մենք խո թագա չենք էկե էս տունը...»։ Նույն հեքիաթի մեկ այլ գործող անձ նույն պառավին ասում է. «-Դեղի, -ասավ, -էս ինչ կոկիկ մանած ես արել...» (ՀԺՀ, հ.8, 1977, էջ 109, 113)։ Եթե հերոսուհու

կողմից այս դիմելածը հիմնավորվում է նրանով, որ մա պառավի հոգեորդին է, ապա երկրորդ դեպքում դիմելածը տարեց կնոջը հարգալից վերաբերմունքի արտահայտում է:

Պառավ բառի հոմանիշներից են մաև «ջադու» և «ջադուքյառ» («ջադուքար») բառերը, որոնք բավական հաճախ են հանդիպում հեքիաթներում: Դա է հավանաբար պատճառը, որ բանահավաք Անուշավան Աբովյանը «Ղասաբ-Օղլը» հեքիաթում Ջադուքար բառը դիտում է որպես անձնանուն (ՉԺՉ, հ.8, 1977, էջ 37): Սակայն սա եզակի օրինակներից է: «Արևելքի թագավորի տղի հեքիաթ»-ում (ՉԺՉ, հ.8, 1977, էջ 175) կերպարը նույնպես Ջադուքար է անվանվում, սակայն անհասկանալի է, թե գրառող էր.Լալայանը դիտում է այն որպես անձնանուն թե ոչ, քանի որ բառը օգտագործվում է նախադասության սկզբում: Ժողովածուի կազմողները այն չեն ընդգրկվում հատորի վերջում տեղ գտած «Չատուկ անունների ցանկում»:

Սի շաղք հեքիաթներում «ջադու» ձևն օգտագործվում է որպես գոյական, իսկ մյուսներում ածական՝ «ջադուքյար մեր», «ջադու պառավ» և այլն: Արարատյան դաշտավայրում գրառված հեքիաթներում «ջադուքյար» ձևը քիչ է օգտավործվում, ավելի հաճախ օգտագործվում է «ջադու» բառը:

Անկասկած «ջադու», «ջադուկ», «ջադուքյար», «ջադուքար» բառերն առաջացել են միևնույն արմատից: Այն դեպքում, երբ «ջադու», «ջադուքյար» բառերը օգտագործվում են որպես պառավի բնութագրական ձև, կարելի է եզրակացություն անել պառավի հատկանիշների մասին: Հեքիաթներում «ջադու» նշանակում է «կախարդ», հետևաբար «ջադու», «ջադուքյար» պառավ նշանակում է «կախարդ պառավ»:

Ստ.Մալխասյանը «ջատուկ» բառի մասին գրում է, որ ներկայումս այն օգտագործվում է «կանանց մասին միայն» խոսելիս (Ստ.Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, 1944թ., հ.2, էջ 53): Հ.Աճառյանը «ջադուկ» բառը բացատրում է որպես «կախարդ (այդ կամ կին)» (Հայերեն արմատական բառարան, հ. 1, 1973, էջ 643, 658), ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ ինչպես և «պառավ» բառը այն կարող է հատկանշել մաև տղամարդու: Այսինքն, այս բառը վաղեմի ժամանակներում չի ունեցել սեռական սահմանափակում, ինչը մենք հանդիպում ենք մաև հեքիաթներում:

Յ.Աճառյանը գրում է, որ «ջադուկ» բառից են առաջացել «ջատակել», «ջադագով» բառերը, որոնք ունեն նաև «միջնորդ, բարեխոս» նշանակությունները: Հեքիաթային պառավի կրկնվող գործառույթներից է միջնորդությունը և բարեխոսությունը: Այս հանգամանքը բացահայտում է, թե ինչու «ջադու» անվանվող կերպարը հեքիաթներում հաճախ հանդես է գալիս նաև բարերարի դերում:

Այսպիսով, «ջադու» և «ջադուքյար» բառերը, որոնք ժամանակակից ընկալմամբ ավելի շատ բացասական բնութագիր ունեն, միշտ չէ որ այդպիսի իմաստ են ունեցել և պարզապես «միջնորդ» են նշանակել:

«Ջադուքյար», «ջադուքար» բառերի երկրորդ բաղադրամասը՝ «քար» կամ «քյար» առաջացել է հնդեվրոպական «kar» արմատից (Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, 1979, էջ 558): «Կար» արմատը առկա է նաև «կարողութիւն» բառում, որն ունի «զորութիւն», «ծեռնահասութիւն», «հնարաւորութիւն» իմաստը: (Ստ.Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, 1944թ., էջ 401): Այս արմատը հայերենում ունի ամենազանազան, այդ թվում «ակ, ակունք» նշանակությունները: Բառիմաստը հիմնավորվում է նաև հեքիաթների միջոցով:

Ըստ Ստ.Մալխասյանի «քար» արմատը կարող է ունենալ նաև «լեռ, սար, ապառաժ» նշանակությունը (հ. 2, էջ 557-559):

Այլ հնդեվրոպական լեզուներում, օրինակ՝ սանսկրիտերեն «karkara» արմատն ունի «կարծր, կոշտ» նշանակությունը, պարսկերեն «kharā» նշանակում է «ժայռ», «կարծր, բիրտ» (Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 558): Կերպարի անվանման երկրորդ բաղադրամասը նույնպես իմաստավորվում է հեքիաթներում. պառավները ոչ միայն կոշտ, որոշակի դիրքորոշում ունեն, այլ նաև բնակվում են ժայռերում և քարանձավներում:

Կարող ենք ենթադրել, որ «ջադու» և «ջադուքյար» բառերը նույնպես հնում չեն ունեցել բացասական բնութագիր և ընդհանրապես «միջնորդ» են նշանակել: Հավանական է, «ջադուքյար» բառն ավելի հանգամանորեն է բացատրում, թե ինչ տիպի միջնորդի մասին է խոսվում հեքիաթում:

Այսպիսով, ստուգաբանելով «ջադուքյար» բառն ըստ նրա բաղադրամասերի, մենք ստանում ենք «կարծր, կոշտ» այսինքն անսասան միջնորդ,

բարեխոս, կամ «Ժայռերում բնակվող միջնորդ», «միջնորդ, բարեխոս, որը շատ կոշտ դիրքորոշում ունի»:

«Պառաձ» բառի հոմանիշներից է «քալթառ»-ը, որը ժամանակակից հայերենում ավելի շատ ընկալվում է որպես «գէշ պառաւ, ջատու պառաւ, ատամները թափած» (1. Զր.Աճառյան, Զայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 567, 2. Սո.Մալխասյան, Զայերեն բացատրական բառարան, հ. 2, էջ 566): Նույն արմատից է առաջացել «kaftar» բառը՝ այսպես են Զնդկաստանում անվանվում «զոգի կանայք, որոնք հիպնոզող ջադուներ են, նրանց հայեացքն անգամ մարդ է սպանում» (Զր. Աճառյան, Զայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 567): Այսինքն մեկ այլ հնդեվրոպական ժողովուրդի բանահյուսությունում քալթառները մոգական կառուցվածքով օժտված կանայք են: Զայկական հեքիաթներում «քալթառները» նույնպես զուրկ չեն մոգական ունակություններից, նրանք հաճախ են հերոսին կամ այլ գործող անձանց ստիպում ենթարկվել իրենց կամքին, երբեմն էլ կոլ տալիս («քալեց փորը»), հիվանդացնում կամ սպանում («փչում», «հիվանդացնում») և այլն:

«Քալթառ» բառի «քաւ» արմատը նշանակում է «մեղքի թողութիւն, արդարացում, ներում, սրբացում», այս արմատից առաջացած «քաւել» բառը նշանակում է «յանցանքը ներել», «անպարտիանել», «հաճեցնել, սիրտը շահել» (Զր. Աճառյան, հ.4, էջ 564): Զեքիաթներում «քալթառները» նույնպես օժտված են մարդու և գերբնական ուժերի միջև միջնորդություն հաստատելու հատկանիշներով: Զր.Աճառյանը այս արմատը բխեցնում է հնդեվրոպական «kau» արմատից, որը նշանակում է «զգուշանալ», նույն արմատից է առաջացել «skeu» բառը, որը նշանակում է «դիտել, նկատել», լատինական «caveo» բառը ունի «զգուշանալ, հսկել, պահպանել» նշանակությունները: Նույն այս արմատից է առաջացել «քաւդանջ - «աստեղագէտ, գուշակ, հմայող» և «քալել» բառերը:

«Քալթառ» բառը կարող է նաև մեկ այլ իմաստ ունենալ: Ինչպես հայտնի է, բանահյուսության մեջ բերանը կարող է դիտվել որպես դուռ, կողպեք: Դրա ապացույցն են հայերենում «բերանդ կողպիր», «բերանդ փակիր» արտահայտությունները: Քանի որ պառաձի հիմնական գործառույթներից մեկն էլ այս աշխարհից դեպի անդրշիրիմյան աշխարհ տանող դռան հսկելն է, կարելի է ենթադրել, որ այն դեպքում, երբ հեքիաթում նշվում է, որ պառաձի բերանում

մեկ ատամ է մնացել, դա ոչ միայն ծերության արտահայտում է, այլև այն, որ կերպարը չի կարող այլևս կատարել իր պարտականությունները:

Կարելի է ենթադրել, որ «քավթառ» բառն ի սկզբանե չի ունեցել բացասական բնութագիր և դա ապացուցվում է նաև այն համագամանքով, որ կերպարն ինքն իրեն կարող է «քավթառ» անվանել, ինչպես օրինակ «Խորթ ախճկանը հեքիաթ»-ում (ՉԺՉ, հ.6, 1973, էջ 46): Այն դեպքում, երբ անհրաժեշտ է բնութագրել «քավթառ» անվանվող կերպարին, հեքիաթներում լրացուցից ածականներ կարող են օգտագործվել՝ «մի քավթառ փիս պառապ» (ՉԺՉ, Դարվիշին տղան, հ.6, 1973, էջ 116):

Այսպիսով, «ջադու», «ջադուքյար» և «քավթառ» բառերը, որոնք հայ բանահյուսությունում հանդես են գալիս որպես «պառապ» բառի հոմանիշներ և բացասական բնութագիր են ենթադրում, վաղեմի ժամանակներում այդպիսին բնութագիր չեն ունեցել և տարբեր իմաստներ են կրել: Հեքիաթների տեքստի ուսումնասիրությունը և բառարմատների ստուգաբանությունը թույլ է տալիս ասել, որ «պառապ» բառի հոմանիշներում պահպանել են կերպարների վաղնջական գործառույթները՝ կախարդական հատկանիշները, բանիմացությունը, երևույթները և հարաբերությունները հսկելու, ավանդույթները պահպանելու գործառույթները, միջնորդությունը մարդու և գերբնական ուժի միջև:

Սի շարք հեքիաթներում պառապին անվանում են «հոգավախ» կամ «անաստված» կնիկ:

«Հոգեվախ» բառը ժամանակակից հայերենում նշանակում է «բարեպաշտ», «աստվածապաշտ»: Սակայն հեքիաթներում կերպարը զբաղվում է ոչ թե աստվածահաճո գործերով: Ավելին, նա ինքն է ասում. «-Իմ բանն ա, որթի, ջան, ես տարվա գլուխ էկած բանը մի սհաթընը քանդում եմ. իմ բանն էլ էտ ա» (ՉԺՉ, Անա թագավորի հեքիաթը, հ. 1, 1959, էջ 73): Այստեղ կատարվածի նկատմամբ ոչ քրիստոնեական վերաբերմունք է նկատվում: Պառապը կատարում է քրոնիկներին հատուկ գործողություններ: Եթե այս տեսանկյունից ենք մոտենում կատարվածին, ապա պառապի գործողություններն արդարեցված են նա պաշտպանում է թագավորի, այսինքն երկրի գերագույն ներկայացուցչի շահերը:

Հեքիաթներում «պառավ» բարի հոմանիշներից է «անաստված» բառը, որը նույնպես խորհրդանշական է: Հայտնի է, որ «Քրիստոնեության մուտքով «դից» բառը ստանում է միայն հեթանոսական աստծո իմաստ՝ ի հակադրություն աստուած բառի. ավելի խիստ հակադրությամբ հեթանոսական աստծու համար, ստեղծվում է չաստուած բառը...» (Գր.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, 1987, էջ 385):

Հետևաբար, «անաստված» բառը հեքիաթներում կարող է ունենալ ոչ թե անհավատ, այլ Քրիստոսի ուսմունքին չհետևող, հեթանոս նշանակություն: Այս հանգամանքն ապացուցվում է նաև տեքստով: Ավելին, այն դեպքերում, երբ կերպարի նկատմամբ օգտագործվում է այս հոմանիշը, չի բացառվում, որ այն կարող է նշանակել նաև «օտարագրի», «այլազգի»:

«Պառավ» բառի «հոգեվախ» և «անաստված» հոմանիշներն իրենց կիրառմամբ չեն համապատասխանում ժամանակակից հայերենում ընդունված մեկնաբանումներին և կարող են դիտվել որպես «հեթանոս» բառի հոմանիշներ: Այս հոմանիշները ավելի ուշ, հավանական է քրիստոնեության շրջանում առաջացած ձևեր են:

«Պառավ» բառը հեքիաթներում կարող է ունենալ բազմաթիվ հոմանիշներ, որոնցից մի մասն ավանդական են, դրանց իմաստի բացահայտումը հնարավորություն է տալիս եզրակացություններ անել կերպարի բնութագրի և գործառույթի մասին: Այսօր այս խմբի բառերը արդեն կորցրել են իրենց նախնական իմաստը և միայն անդրադառնալով նրանց ծագումնաբանական վերլուծությանը և հիմնվելով հեքիաթների տեքստերի վրա հնարավոր է դառնում վերականգնել նախկին իմաստը:

«Պառավ» բառի հոմանիշները մատնանշում են կերպարի կապը հնդեվրոպական այլ ժողովուրդների, այդ թվում հին հնդկական, սլավոնական, բալթյան աստվածային ծագում ունեցող կերպարների հետ, և մենք դրանք կարող ենք բաժանել երեք խմբի:

Առաջին խումբը կազմում են «մայրեր»-ը:

Երկրորդ խմբը կազմում են «ջադու», «ջադուկ», «ջադուքյար», «ջադուքյար» բառերը, որոնց բուն իմաստը «միջնորդ», «բարեխոս» է: Քանի որ միջնորդությունը մարդկանց և գերբնական ուժերի միջև՝ կախարդական

հատկանիշ է, ապա որպես երկրորդական իմաստ առաջացել է նաև «ջադուկախարդ» գուգահեռը:

Երրորդ խմբում կազմում են «քաֆթառները» կերպարներ, որոնք օժտված են հսկելու, զգուշացնելու, պահպանելու հատկանիշներով:

Այսպիսով, հեքիաթային պառավները, համաձայն անվանման հոմանիշ ձևերի ստուգաբանության, ի սկզբանե բավական տարբեր կերպար են: Դրա ապացույցն է նաև այն, որ ժամանակակից հայերենում «կախարդ» բառը¹ ունի բազմաթիվ հոմանիշներ, որոնք ավելի ստույգ են հատկանշում կերպար:

Ուսումնասիրելով հեքիաթային պառավի անվանման հոմանիշ ձևերը՝ մենք գալիս ենք եզրակացության, որ դա մի հավաքական կերպար է, որն իր վրա է վերցրել տարբեր տիպի կախարդական հատկանիշներով օժտված բանահյուսական կերպարների առանձնահատկությունները և բնութագրերը:

¹ Գր.Ջահուկյանը տալիս է «կախարդ» բառի հետևյալ հոմանիշները. «զետ — թովիչ-հարցուկ-դիւթ-իղծ-կախարդ (ասար)- կիւս-հմայ(օղ)—վիուկ-քաղղեայ (քաղեայ)»: (Գր.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, 1987, էջ 274): 2. Ա.Սուքիասյանը տալիս է «կախարդ» բառի հետևյալ հոմանիշները. «Դյութ, վիուկ, մոգ, հարցուկ, զետ, գուշակ, հմայող, հմայիչ, հրապուրիչ, թովիչ, ձեռնածու, դեղագետ, քաղղայ, կյուս, իղծ, ռամզարկ, հուռթիչ, հմա, ջեղուկ, ջաղու, ջաղութագ, ջառռահ փեծրար»: . Ա.Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, 1967, էջ 296: